## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**«ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/32» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային ձևով Աբովյանի համայնքապետարանի 2017 թվականի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Աբովյան

16/01/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳՀՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ), Ա. Չոբանյանը (ԳՊ/ԳԱ), Կ. Վարդանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Զոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

Պատվիրատու՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/32» ծածկագրով Աբովյանի համայնքապետարանի 2017 թվականի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. **«ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/32» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին**

**Մ. Գուլոյան**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2017 թվականի հունվարի 16-ին, ժամը 10:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2. **Տեղեկատվություն գնման հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին**

**Մ. Գուլոյան**

2.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/հ | Անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը | Տ/Փ-ի սպասարկանի հ/հ | Հասցեն |
| 1 | «Մաքսհուր» ՍՊԸ | maxhur.tender@mail.ru | 000034054 | ք. Երևան, Բրյուսովի 19 շ., բն.15 |
| 2 | «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ | cpsarmenia@gmail.com (010)540911,(010)526746 | 000034042 | ք. Երևան, Պուշկինի 1 փող |
| 3 | «Ֆլեշ» ՍՊԸ | flashltdtender@gmail.com | 000034039 | Արարատի մարզ, գ. Նարեկ |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**3. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին**

**Մ. Գույոյան**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ)* | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| Վառելիք | | | | | | |
| 1 | «Մաքսհուր» ՍՊԸ | 1 815 604 | 44 646 | 1 860 250 | 372 050 | 2 232 300 (երկու միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր) |
| 2 | «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ | 1 693 766,67 | 85 400 | 1 779 166,67 | 355 833,33 | 2 135 000 (երկու միլիոն հարյուր երեսունհինգ հազար) |
| 3 | «Ֆլեշ» ՍՊԸ | 1 725 791,67 | 53 375 | 1 779 166,67 | 355 833,33 | 2 135 000 (երկու միլիոն հարյուր երեսունհինգ հազար) |

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**

**Մ. Գուլոյան**

4.1 «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ ընթացակարգին մասնակցելու դիմումի (Հավելված 1), մասնավորապես նշված չէ, թե որ չափաբաժնով նշված ապրանքը որ երկրի արտադրության ապրանք է հանդիսանում:

4.2 «ՍիՓիԷս Օյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին, բացառությամբ N 3.5 հավելվածի, մասնավորապես հավելվածը www.armeps.am կայքում տեղադրված չէ:

4.3 «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4.4 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Մաքսիուր» ՍՊԸ-ին և «ՍիՓիԷս Օյլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև 2017 թվականի հունվարի 17-ը, ժամը 10:00-ն շտկել արձանագրված անհամապատասխանությունը հրավերով սահմանված ձևով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գուլոյան

անդամներ՝ Ա. Չոբանյան

Գ. Խաչատրյան

Կ. Վարդանյան

Լ. Շառաջյան

Քարտուղար՝ Տ. Ջոհրաբյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**«ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/32» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային ձևով Աբովյանի համայնքապետարանի 2017 թվականի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Աբովյան

17/01/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ), Ա. Չոբանյանը (ԳՊ/ԳԱ), Կ. Վարդանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Ջոհրաբյանը (ԳՊ/ՄՀՄ)

**1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի) անհամապատասխանությունների շտկման մասին**
**Մ. Գուլոյան**

1.1 Ընդունել ի գիտություն, որ՝«Մաքսիուր» ՍՊԸ-ն և «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով տեղեկացվել են հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ և սահմանված ժամկետում շտկել են դրանք:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**2. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների մասին**
**Մ. Գուլոյան**

2.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

Գնահատել բավարար «Մաքսիուր» ՍՊԸ-ի, «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի և «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2.2 ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 44-րդ կետի 5 ենթակետի համաձայն առաջարկված նվազագույն գների հավասարությամբ պայմանավորված գների նվազեցման նպատակով նիստը կասեցնել: Բավարար գնահատված հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին առաջարկել մասնակցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների,

որը կկայանա հունվարի 20-ին, ժամը 10:00-ին Աբովյանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գուլոյան

անդամներ՝ Ա. Չոբանյան

Գ. Խաչատրյան

Կ. Վարդանյան

Լ. Շառաջյան

Քարտուղար՝ Տ. Ջոհրաբյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

### «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/32» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային ձևով Աբովյանի համայնքապետարանի 2017 թվականի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

20/01/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաչյանը (ԳՊ/ԲԱ),
Ա. Չոբանյանը (ԳՊ/ԳԱ), Կ. Վարդանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Ջոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

**1. Առաջարկված նվազագույն գների հավասարությամբ պայմանավորված միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**
**Մ. Գուլոյան**

1.1 ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 44-րդ կետի 5 ենթակետի համաձայն առաջարկված նվազագույն գների հավասարությամբ պայմանավորված գների նվազեցման նպատակով նիստին նոր գնային առաջարկ է ներկայացրել ՍիՓիէս Օյլ Փորփորեյշն ՍՊԸ-ն՝ 2 131 500 (երկու միլիոն հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**2. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին**
**Մ. Գուլոյան**

2.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

Գնահատել բավարար «Մաքսիուր» ՍՊԸ-ի, «ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի և «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը: Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ մասնակիցներին.

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ)* | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| Չափաբաժին N1 Բենզին ռեգուլյար | | | | | | |
| 1 | «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի | 1 693 766,67 | 82 483,33 | 1 776 250 | 355 250 | 2 131 500 (երկու միլիոն հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր) |
| 2 | «Ֆլեշ» ՍՊԸ | 1 725 791,67 | 53 375 | 1 779 166,67 | 355 833,33 | 2 135 000 (երկու միլիոն հարյուր երեսունհինգ հազար) |
| 3 | «Մաքսիուր» ՍՊԸ | 1 815 604 | 44 646 | 1 860 250 | 372 050 | 2 232 300 (երկու միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր) |

### 3. Գնահատող հանձնաժողովի կողմից կատարվելիք գործողությունների մասին
### Մ. Գույլյան

3.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

3.2 Հրավերի 7.7 կետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում

հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գուլոյան

անդամներ՝ Ա. Չոբանյան

Գ. Խաչատրյան

Կ. Վարդանյան

Լ. Շառաչյան

Քարտուղար՝ Տ. Ջոհրաբյան